Մի լիցի զարմանք փոքր, զի միջոցաւ իբր ամաւ չորս հարիւրով մինչև ցայսօր որ բարցաւ թագաւորութիւն 'ի տանէն և 'ի յազգէն Հայոց, և լծորդեցաւ ծառայութիւն 'ի ձեռն անօրինաց գերելով ուստերք և Դստերք, կողոպտելով զարդ և ամենայն ստացուածքս մեր, ճշտելով 'ի ներքոյ ծանտր հարկի հասուցանելով մեզ մինչև յետին թշուառութիւն, այլ գովելի ազգս այս ամենայն եղելութիւն ընդ դէմ բնութեան յանձն առնլով 'ի վերայ իւր պահելով կատարելապէս հաւատն իւր առ Տէր Աստուած։ Դաւանելով ամենայն խորհուրդ սուրբ Եկեղեցւոյ, որում աւանդեցաւ 'ի փրկչէն մերմէ Քրիստոսէ, որպէս Շառաւիղէ 'ի վերայ մեր սուրբ Եկեղեցին Հայաստանեաց 'ի Արարատ մինչև ցայսօր, որում յուսամ 'ի Տէր, զի պահեսցէ զմեզ նոյն կատարեալ սիրով և հաւատով մինչև յաւիտեան։

Այլ ըստ սովորութեան ամենայն կարգաւ ազգի և ըստ վկայութեան սուրբ գրոց, որում հաւատացեալ եմք զի հաստատի երկու և երիս վկայիւք ամենայն բան, ահա առաջի պատուելի ընթերցողաց կացուցանեմ 'ի վեր յիշեցեալ հինգ զօրեղագոյն և հաւաստի վկայքն՝ որում հաստատել կարէ 'ի միտս ձեր յատկապէս Շնորհ, սէր և ողորմութիւնն ամենազօր Արարչին մերոյ 'ի վերայ երկրին Արարատու, որում ոչ ոք 'ի մի